ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆՄԱԱՊՁԲ-23/55

ք. Երևան «08» 06 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Ս. Լպուտյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 70257600 (յոթանասուն միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011005130 ՀՎՀՀ 02698732	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Շևչենկո 34 «Ամերիա Բանկ» ՓԲԸ Հ/Հ 1570018417800100 ՀՎՀՀ 02560522

Գլխավոր քարտուղար՝

_____ **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

_____ **Ս. Լպուտյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
« » 2023թ կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-23/55 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի								Մատակարարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավոր գինը, ՀՀ դրամ	ընդհանուր գինը, ՀՀ դրամ	հասցեն	ժամկետը
1	22111110/207	Դասագրքեր	*Գնման առարկա է հանդիսանում «Շախմատ 4» դասագիրքը /4-րդ դասարան/, հեղ. Հ. Տ. Թումանյան* Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Դասագիրքը պետք է բաղկացած լինի 48 դասերից: Յուրաքանչյուր դաս պետք է կազմված լինի տեսական և գործնական մասերից: Տեսական մասում պետք է տրվի դասի հիմնական նպատակը, իսկգործնական մասում պետք է երկայացվեն կրթական հիմնական խնդիրները: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների,	հատ	36036	1000	36036000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			հստությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Պետք է ապահովվեն միջառարկայական կապերը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակույթային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: Պատկերազարդումը պետք է ներառիսովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը 60x84 1/8 Տեքստի թուղթը օֆսեթ Ծավալը 12,5 տպ. մամուլ Էջերի քանակը 100						
			Գնման առարկա է հանդիսանում «Շախմատ 3» վարժությունների փեթերը /3-րդ դասարան/, հեղ. Հ.Տ.Թումանյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Վարժությունների տետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի						

2	22811130/18	Տետրեր	շախմատային գիտելիքների ասրապնդասը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 48 առանձին դասերից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը:Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին:Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր:Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը 60x84 1/8 Ծավալը 9,5 տպ. մամուլ Էջերի քանակը 76	հատ	38239	450	17207550	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

3	22811130/19	Տետրեր	*Կնոջ առարկա է հանդիսանում «Շախմատ 4» վարժությունների տետրը /4-րդ դասարան/ հեղ. Հ.Տ.Թումանյան* Բովանդակային չափանիշներ Վարժությունների տետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 48 առանձին դասերից, լրացուցիչ վարժություններից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիք. Առանձնահատկություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ	հատ	37809	450	17014050	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			հասաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: Պատկերազարդումը պետք է ներառիսովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Տեխնիկական չափանիշները Չափսը 60x84 1/8 Ծավալը 8 տպ. մամուլ Էջերի քանակը 64						

1-3- րդ չափաբաժինների համար

1. Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:
2. Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:
3. Դասագրքերն ու տետրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:
4. Դասագրքերի և տետրերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից ներկայացված բաշխման ցուցակի:

ԳՆՈՐԴ

Հ. Հակոբյան
Կ.Տ (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

Ս. Լպուտյան
Կ.Տ (ստորագրություն)

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաշիվբաժին	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ոչ պետական ուսումնական հաստատութ.	ԸՆԴԱՄԵՆԸ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	15	16
1.	Դասագրքեր /«Շախմատ 4» դասագիրք, 4-րդ դասարան/	11784	1216	3055	2655	1658	3925	1964	3605	3644	544	1354	632	36036
2.	Տետրեր /«Շախմատ 3» վարժությունների տետր, 3-րդ դասարան/	11944	1418	3142	2708	1865	4076	2652	3694	3996	546	1459	739	38239
3.	Տետրեր /«Շախմատ 4» վարժությունների տետր, 4-րդ դասարան/	12052	1513	3068	2757	1772	3925	2478	3614	3818	608	1511	693	37809

Ծանոթություն*

1. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին հատկացվող դասագրքերի քանակի մեջ ներառված է ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող հաստատություններին հասանելիք դասագրքերի ու վարժությունների տետրերի քանակը:
2. Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերն ու վարժությունների տետրերը հանձնվում են Երևանի «Վարդանանք» կրթահամալիր /հասցե՝ ք.Երևան, Էրեբունի, Միչուրինի 36, հեռ. 010 577 877, 010 577 951, տնօրեն Շ.Զաքարյան՝ 091 101 016/, որտեղից կիրականացվի բաշխումը:

ԳՆՈՐԴ

02698732

Հ. Հակոբյան

Կ.Տ (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

02560522

Ս. Լպուտյան

Կ.Տ (ստորագրություն)

Հավելված N 2
« » 2023թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-23/55 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110/207	Դասագրքեր	0	0	0	0	0	0	36036000	36036000	36036000	36036000	36036000	36036000	36036000
2	22811130/18	տետրեր	0	0	0	0	0	0	17207550	17207550	17207550	17207550	17207550	17207550	17207550
3	22811130/19	տետրեր	0	0	0	0	0	0	17014050	17014050	17014050	17014050	17014050	17014050	17014050

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

---------- Հ. Հակոբյան
Կ.Տ (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

---------- Ս. Լպուտյան
Կ.Տ (ստորագրություն)